



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ильичу

№ 6 (14)

6

891.99.09

5-54

223451
891.96.08 Заг. суму
УП-54 утведкунг

3032

6/18/

- 6 NOV 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ ԿԻՅ
ՀԵՌԱԿԱ ՌԻՍՄԱՆ ԲՅՈՒՐՈ

Ձեռագրի իրավունքով

ԼԵԶՎԻ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՈՒՐՍ 11 1931 թ. ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 6 (14)

ՊՐՈՖ. Ա. ՏԵՐՏԵՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

XIX—XX Դ. Դ.

391.99.09

ԿՈՒՐՍ 11

ՅԵՐԵՎԱՆ

1931

891.99.09
10 2 SEP 2013
584
Wap

65.173

ՊԵՏՏՐՈՍԻ ՏՊԱՐԱՆ
ԳՐԱՌԵՊ. 6177 (Բ)
ՊԱՏ. 609
ՏԻՐԱԺ 1000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐ 2237-51

ՀԱՎՀԱՆՆԵՍ ՀԱՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գյուղը և գյուղացիին Հովհաննիսյանի տեղագրությունը
մեջ. — Նրա և Թումանյանի հոգևոր տարբերությունը. — Քաղաքի մեջ
քյուր մեր իրականության մեջ. — «Սիրտ և վայելքի» հասարակական
հիմնավորումը. — Պատմական անցյալի կուլտ. — Դասակարգային հա-
մերաշխության փառազր. — Կյանքի և մահվան պրոբլեմը. — Հովհաննիս-
յանի սոցիալական իդեալները. — Նրա յերգերի գեղարվեստական ար-
ժեքը. — Յեղրակացու քյունները.

I.

Հովհաննիսյանի տեղագրությունը մեջ մի յերևույթ ամենից ա-
ռաջ աչքի յե ընկնում: Արտաքուստ շատ գարմանալի և տարրերնակ
յերևույթ: Այդ աչքի և, փոր բանաստեղծը ծագումով գյուղացի յե, դրե-
թե իր ամբողջ կյանքն անց և կացրել գյուղում, բայց գյուղ և գյուղա-
ցի նրա աչքով քիչ անգամ են ընկել. միկրոսկոպով պիտի ման գաք
զեղջկական կյանքի պատկերներ գտնելու համար այդ «գյուղացու-
փորով» յերկերի ժողովածուներում: Ինչպես յերևում և չնայն իսկ այդ
բնից ել մեր հեղինակը դժգոհ և յեղել: Յեվ ահա, յերբ նա հրատարա-
կության և տալիս իր յերկերի յերկրորդ ժողովածուն, հանում և առա-
ջին ժողովածուի մեջ մտած մի շատ բնորոշ գյուղական պատկեր, փոր
կրում և «Գյուղի ժամը» խորագրերը:

Ինչպիսի բացատրել այդ յերևույթը: Ասել, փոր հիշված փոստա-
փորը գեղարվեստական թուլության պատճառով հեղինակի կողմից
գուրա և նեղվել, — չի կարելի նախ՝ այդ փոստափորը Հովհաննիսյանի
քննադատների կողմից շատ գովված մի յերկ և, իսկ մենք գիտենք, փոր
նա ուշադիր կերպով լսում էր իր քննադատներին և հաջի մտնում նը-
րանց կարծիքը: Յեվ յերկրորդ՝ գեղարվեստորեն շատ թույլ «Ավետա-
րանը» նա անխախտ պահել և յերկրորդ ժողովածուի մեջ, զեկավար-
վելով փոշ թե գեղագիտական, այլ գուտ գաղափարախոսական մոյակ-
ներով: Հետևապես, «Գյուղի ժամը» գուրա և մնացել ավելի շատ հե-
ղինակի հասարակական, քան գուտ-գրական թեքման հետևանքով:

ի՞նչ հասարակական թեքում եր դա: Հայտնի չէ, վոր Հովհաննիսյանը սկսել է գրել ութսունական թվականներին սկզբներէջ, վորոչապէս 1882 թվից: Գյուղի տնտեսական բացարձակ աղքատութիւնը միջոցներին հակադրական շահեր եր ընդունել մեղադրում: Կապիտալիստական կենտրոններն դարձաւ պատճառով՝ գյուղը հետզհետեւ դատարկւում եր, պանդուխտներն շարանը բռնել եր քաղաքներն ուղին, իր հետեւում թողնելով վաղ-խառններն մի գեղատիւզ վոհմակ, առեւտրական կապիտալի վերջին կուտակումներն, վորոնց նույնպէս գյուղի սահմանները նեղում էին և նրանք ևս սկսում էին աճապարել՝ առեւտրական կապիտալին արգելա-նալըրական դործադրութեան տալու համար: Ահա՛ աղքատացեալների վարկիցանին՝ բուրժուական ինտիլիգենցիայի մի մասը, վոր յերբեք սկզբունքով չեւ ծխում կապիտալիստական հասարակարգը, ձայն ե բարձրացնում «կյանքի ստիւերոտ յերկուցթներին» դեմ, վորովհետեւ նախ՝ նոր ուսմացող արդշունարեւական քաղաքների ասպարեզը դեռ չատ եր նեղ չարից դուրս բազմաթիւ ազատ ձեռքեր պարփակելու հա-մար. յերկրորդ՝ «յերկրի խնդիր» կար. հայ գյուղացին գաւառակելով իր հողը՝ տեղ եր բաց անում «ստարներն համար». վերջապէս, կար նաեւ բուրժուակայի մշտական տենչանքը՝ իրեն ցույց տալ «վողջ ժողո-վրդի» բարեկամ «առաջ գասակարգային կանխակալութեան»:

Այսպէս եր պատմական միջավայրը, յերբ Հովհաննիսյանը գրում եր իր «Գյուղի ժամը», վորի մեջ նա վստայում է վաղխառնութեան ճի-րաններում տառապող գյուղացուն: Ազան, պարտատերը պիտի դա «ամալի պէս դուռ» խեղճ գյուղացու վրա և իր տփած պարտքը պահանջի: Յեթե չկարողանա տալ այդ պարտքը, ազան պիտի քշէ նրա կովը, վերջին կթանք, «բիծոն»: Գրեգորն, այդ գեղուկը պիտի մնա ձեռքը ծոցումը, աշխենքն պիտի բռնէ քաղաքի ուղին, բոլոր քաջաբոյնների միակ հուշան ու ապովներ:

Ութսունական թվականներին սկզբներում Գրեգորները խեղճ ու կրակ գեղուկներ էին: Յերբ Հովհաննիսյանը հրատարակութեան տվեց իր նոր ժողովածուն, գրութեան արգեն փոխված եր մի հայտնի չա-փով: Գրեգորները բռնել էին հեղափոխութեան ուղին և միապետու-թեանը բուրժուակայի և կալվածատիրութեան դուրսն անցած նա-հանջի յեր դիմել և իրենց կորդել տվել «մանիֆեստը»:

Հովհաննիսյանն իր յերկերի յերկրորդ ժողովածուն հրատարակու-թեան տվեց այդ պատմական դարաշրջանի յերկրորդ ողբ, յերբ հեղա-փոխութեան բարձրացած ալիքը իջել եր և հարվածից սթափված տի-րապետները դիմել էին վերածի:

Բանաստեղծն իր յերգերը լույս եր քնծայել բնակցիայի որերին, և հանել եր Գրեգորների դարգերին նվիրված վտանաւոր: Հանել եր վաղխառնութեան դեմ գրածը և որահել եր ավետարանին ուղղված ներբո-յը: Սա արգեն վորոչ հատարակական համակրանքի ցուցանիչ եր, մի հայտնի գրող:

Իսկ մի՞թե գյուղացին բոլորովին դուրս եր մնացել յերկրորդ ժողովածուից: Վո՛չ, բոլորովին դուրս չեւ մնացել, նա կար իր սիրտ և ազդեցիկ յերգերով. կա՛ր վաղխառն և ծնրադրող գյուղացին, բացա-կալում եր բողոքող և կովող գեղուկը: Յեւ վարմանալի չէ, վոր այդ աղքատ ե. Հովհաննիսյանի հատարակական համակրանքների համար իորթ եր բողոքող գյուղացին: Նա չի տեսնում գյուղական տնտեսա-կարգ, վորպեսզի չնկարագրէ մասշտաբային գյուղացուն: Նա տեսնում և յեր-դող գյուղացուն, վորպեսզի նկարագրէ նրա վաղխառն ու մաղթան-քը: Իսկ այս վերջինների վրա չէ դնում շեշտը, վորովհետեւ «հետեւ-դական գեմոկրատիզմը» յերբեք մեր բանաստեղծի առաջինութեանն-քից չէ յեղել: Հովհաննիսյանն իր յերկերի նոր հրատարակութեանից հանել է վոր ժիպն «Գյուղի ժամը», այլ և մի վտանաւոր, վորի մեջ հիշատակութեան կա դարձյալ գյուղի մասին. այս անգամ հանելու պատճառը մի քիչ այլ է: Գյուղի մեջ յերկար տարիներ ապրելով, նա այլ ևս չեւ կարող ուսանողի կարոտով հիշել իր ծննդավայրը, կամ առ-հասարակ հայ գյուղը, ինչպէս այդ արել է «իմ հայրենիքը տեսե՛լ ես, տոտ» մոտոտն կրող վտանաւորի մեջ: Ուսանողի հափշտակված գովքը գյուղի սրանջնիքներին, տարիքավոր, փորձված և գյուղից ձանձրա-ցած բանաստեղծին այլ ևս չէին կարող դուր գալ, և նա դեռ և ձգել յա՛մա:

Այդ բոլոր վտանաւորներով՝ Հովհաննիսյանն ավելի ցայտուն և դարձրել իր ստեղծագործութեան տիրողութեանը, հատարակական-քին միաձուլ կերպարանքը, փրկելով այն գաղափարներն ու ձեւերը՝ վորոնց սրատեսութեամբ նա հոշակ և ձեռք բերել՝ վորեւիցե անհետեւողա-կանութեանից և աններդաշնակութեանից:

Այժմ տեսնենք թե՛ վո՞րն և նրա հուշակի հանրային հիմքը:

II.

Պրտաբուստ շատ զարմանալի չէ դարձյալ մի յերկուցթ: Հովհան-նիսյան և թուական գրեթե միաժամանակ (1887-1890) գրական տա-պաւիղ իջան, բայց՝ վորոչ չափով՝ տարբեր ընդունելութեան և համբաւ պատգամ, ավելի պարզ, մեկն համեմատաբար շուտ հուշակ ձեռք բերեց,

խոյն մ'յուսիսի գրական անունը փոքր ինչ ուշ ստեղծվեց: Նկատելի առեր, փոր աշատեղ մեկի կամ մ'յուսի տաղանդի մեծությունը փորեն դեր չի կատարել, փորովհետև յեթե նայելու լինենք յերկու բանաստեղծներին ալլ տեսակետից, Թումանյանի ձերքն ավելի մեծ գիտարարն ունի, քան մ'յուսինը: Աշատեղ ևս յերկու թի պատճառը փոշ թե արվեստն էր, ալլ հասարակությունը, Անդրկովկասի անտեսական դրությունը: Հովհաննիսյանը շատ ավելի աշխատական քնար ունի, շատ ավելի էր ժամանակակից մարդկանց սրանց էր խոսում և նրանց բղձերին բաժարարություն տալիս: Թումանյանի փորը Հովհով ազգագրական թեքում ունեցող առաջին հաստըր չէր կվորոզ մրցել Հովհաննիսյանի պատճառած տարափորություն հետ, փոր սկզբում չամեցուցիչ մի բան էր, առես, հանկարծ լեիլեցուն սրահի մեջ մեկ սուամր պայթեց:

Իսկ ի՞նչու Հովհաննիսյանը դարձավ «մաքերի գերբխան»: Յերկու պատճառ կար: Նախ՝ մեր բանաստեղծի անդրանիկ ընթերցողներին, քննադատներին և բեցեղեկներին գրավում էր նորելուկ յերգչի քնարի համարձակությունը սիրո և վայելքի բնագավառում, նա յերգում էր, ինչպես պնդում է յին շատերը, «առույց և առողջ սեր», յերգում էր սերն ու կինը փոշ թե վախկոտ ասղերով, ինչպես էր նախորդները, ալլ նովատորի խեղախությունը—թե մեկը, թե մ'յուսը դարձնելով ինքնուրույն մեծություններ: Այդ համարձակ մոտեցման ուժ էր տալիս նրա յերգերի կատուցման պարզությունը, զգացմունքների համակիչ անկեղծությունը և առհասարակ մոտանալորի հորինվածքի նորությունն ու պայծառությունը: Նոր, պարզ և անկեղծ հատկություններով էր ոժտված Հովհաննիսյանի սիրո քնարի համակ բովանդակությունը:

Բայց դա դեռ քիչ էր, կար և մի ալլ կողմ:

Ութսունական թվականների հայ բուրժուական հասարակայնությունն արդեն փորը Հովհով հաստատուն բնույթ էր ստացել. արդեն վերջացել էր «մեծ գրոհի» շրջանը, հողեփոր—ալատական արժեքների փրկումն ու վերագոտափրկումն հոգուտ բուրժուականի: Այդ հիմքի վրա արդեն բարձրանալ էր սկսում բուրժուական նոր քաղաքացին իր ազրումներով և խոկումներով: Նախորդ շրջանի խոսող, քաղաքացի, բայց անմաքմին հերոսների փոխարեն, Լեվոնների ծրագրային ճառերից հետո՝ սրտի հանդես դար ալլ նոր մարդը և աշխատեր գրական հրադարակը նվաճել: Նոր հասարակայնությունը սրտի բնվազը ու հանապարհ տար նոր «ազգային—բուրժուական իդեալներին», փորնեց գալանդող լինելու յեր նոր հասարակական մեղջանությունը, ալլինք

միջին բուրժուական, քաղաքային մանր—բուրժուական վերնախավը:

Հովհաննիսյանի յերգերի ուղն ու ծուծը ալլ վերջինի գաղափարախոսությունն էր: Մրան հրապույր և հմայք պարզեցվելու համար նա սղավել էր մեր ժողովրդական բանահյուսության անպատ շաճաք բանից, ալլտեղից հանելով պատկերների, գույների և արտահայտությունների մի մեծաքանակ պաշար: Բովանդակության և ձևվի նորությունը, սիրո անկեղծությունը, հասարակական մեղջանի վարքի պարզ զլուծը, նրա անձնական թախիծն ու հանրային լավատեսությունը, վերջապես, ժողովրդական կյանքի ալլտրն ու յերեկը գիտելը, պատմական անցյալով տարվելու միտումները—ալլ բոլորը մեր գրականության համար մի նոր աշխարհ էր, ավելի շուտ՝ ալլ ամենի կոմբինացիան էր նորությունը, փոր բերում էր նոր, քաղաքային կուլտուրայի գերակշռություն նահապետական կենցաղի հանդեպ: Հայանի յե, փոր կրքի, կյանքի վայելքի յերգերը, զգացմունքների մերկությունը քաղաքի ալլդեցությունն է: Ութսունական թվականների վերջերին, յերը հանդես յեկավ Հովհաննիսյանը, մեղանում արդեն բացորոշ կերպով բուրժուական ինդիվիդուալիզմը քանդում էր նահապետական կենցաղի վերջին հիմունքները: Իր ալլ աշխատանքին հմայք պարզեցվելու նպատակով՝ բուրժուական դրան տալիս էր համաժողովրդական բնույթ և անցյալ մեծության գրոհ: Հենց ալլ պատճառով էլ Հովհաննիսյանին համարում են Ալիշանի, Պատկանյանի և Շահապիղի «տաղանդալոր աշակերտը անմիջական չարունակողը» (Մ. Բերբերյան):

III.

Հովհաննիսյանն իր գրական դործունեության բովանդակությունը միշտ էլ փորը կերպով բաժանել է յերկու մասի—«սեր» և «գաղափարական աշխատանք»: Բայց ալլ բաժանումը խոր տարբերություն յերկու միջև դնելու նպատակ չունի: Յերկուսն էլ վերաբերում են մի հանրային գանդվածի և բղխում են նրա կացություն և մտածություն էլությունից: Կյանքի վայելքն ու ալլ վերջինն արդարացնող թերիան, «սերն ու գաղափարը» չի կարելի միմյանցից անջատել, փորովհետև մեկը մ'յուսին լրացնում է, մեկը մ'յուսի արձագանքն է: Ուստի և Հովհաննիսյանի ստեղծագործության հասարակական և գրական արժեքը բնորոշելիս, մենք պետք է նկատի առնենք նրա յերգած նոր մարդուն իր բովանդակ էլությունը՝ առանց անջատելու նրա աուրյան և փիլիսոփայությունը:

Նախ քննենք սուղին խնդիրը. ի՞նչ հասարակական արժեք ունի Հովհաննես Հովհաննիսյանի գրական յերկասիրությունը:

Մեր բանաստեղծի ստեղծագործության հասարակական արժեքը պատմական է: Պատմական այն իմաստով, վոր ութսունական թվերի սկզբից սկսած մինչև 1905 թվականին հաջորդած բեկեցիայի սրբոր լանտառեղծ Հովհաննիսյանը մի նուրբ ջերմաչափ է հանդիսացել հայ քաղքենիության տրամադրությունների բարձրացման և վարելքի համար: Իր հանրային գրուպայի եմոցիոնալ մթնոլորտը նա անդրադարձրել է նույնքան ճշտությամբ, վորքան և նրա ինտելեկտուալ սֆերան:

Ի՞նչ արժեքներ է հայտնագործել այդ բնագավառում մեր բանաստեղծը:

Լիբերալիզմի մեղրամսին, նրա «մեծ գրոհի» շրջանին (1872-1882) հաջորդում է մի ծանր, ձանձրալի և յերկուղալի առորդ: Ասացինք, վոր Հովհաննիսյանն ասպարեղ իջավ մեղրամսի հենց վերջաբանի մոմենտին, 1882 թվին, այսինքն այդ թվականից նա սկսեց գրել: Բնական է, վոր նրա յերկերում սրտը և արձագանք տար այդ առորդին: Լիբերալների մարտնչող սերունդը անդի յեր տվել լիբերալիզմի իտալական կրկնակի հաշվապահության: Բուրժուազիան արդեն տիրացել էր իր ձգտած դիրքերին, և հարձակումից անցել իր պաշտպանության, սկսել էր տուրք տալ տոլստոյականության:

«Ձգում եմ արդեն հանգչում և հոգիս» յեղերերգի մեջ,—գրում է Հովհաննիսյանին ուսումնասիրողներից մեկը,—պարզապես ցորանում է 1883—1886 թվերի մեր հասարակական-ազգային տատապագին վիճակը, յերբ սուս-թուրքական պատերազմի առաջ բերած վազեփորությունն անցած էր հուսախաբությամբ և հայտնի պատմական պատճառներով տիրում էր ընկճվածություն առանց վազեփորության նոր ճանապարհների»:

Այս գրությունը Հովհաննիսյանի բանաստեղծության մեջ արձագանք է գտել վորոշ հանրային համլեթականությամբ, վոր աչքբան ոտպական էր իր դարաշրջանի մանր գործերին, մանր մարդկանց և նրանց մանր ու տատանվող քաղաքականության: Այս վերջինն նրանց մեջ սուղ էր բերում ապրելու, կյանքը վայելելու թեքում: Փափկահեցության յերազանքով են որորվում նրանք, վորոնց առորդան յեցուն է «անյուժեկի առեղծվածներով»: Հովհաննիսյանի տոփական սիրարխությունը մեր քննադատական գրականության մեջ շատ չնչին հակահարվածի յե հանգիպել: Նույնիսկ հորվածողներն անգիր են

սովորել, բերան են արել նրա «աջամական տաղերք», վորոնք կոչելին անում իդեալ դարձնելու «հավիտյան վայելչությունը», անհագուրդ սեռի մոլուցքը, ինքնամոռացության մատնվելու հակումները: Մոռանալ բուրժուազիայի ստեղծած տաղտկալի առորդան և թեվա-կոխել յերազանքի աշխարհը: Հեռանալ և մոռանալ. ահա ձեզ «հավիտյան վայելչության» տրամաբանական վախճանը: Ութսունական թվականների բեկեցիային հետևող այս ապրումները նորից մեր գրականության մեջ ուղեկցում են սկսում 1905 թվականի բեկեցիայից հետո, յերբ կյանքից հեռանալու կոչը, հեռանալն ու մոռանալը, ուղտի վրա նստած արևի հետևից ման գալը դառնում է բանաստեղծական պրակտիկա:

Համլեթականությունը, ինչպես տեսնում ենք, մեղայի մի կողմն է, մյուս կողմը—վայելչասիրությունն է՝ իր հիմքում ընկած ինդիվիդուալիզմով հանդերձ: Կյանքի այդ պրոպան փոքր ինչ զարգարելու համար մեղջանը դիմում է պատմական անցյալին, և աշխատում է փոխ առնել նրա վերաբերուն իր բարոյական մերկության համար: Պատմական անցյալի հերոսներին դիմելով՝ նա ցուցնում է իր ներկա կյանքի մանրությունն ու վողորմելիությունը: Հովհաննիսյանի քննադատներին հիացում է պատճառել նրա «Ավերակ» վերնադրով վոտանավորը, վորի մեջ բանաստեղծը յերգում է «նախնյաց մեծությունը», «արքունի փառաց հիշատակը», առհասարակ «մեծաշուք կենաց հետքը»: Մի ուրիշը գովել է «Տղմուտ» բանաստեղծությունը, վորի մեջ հին գետի բերսնով Հովհաննիսյանը «հայերին հիշեցնում է անցած փառքը», «փառավոր նախորդաց», «վարդանների առյուծական հոգին»: Մի այլ վոտանավորի մեջ մեղջանական «խեղճ աշխարհի» դիմաց տրվում է հին, բայց փառավոր անցյալը.

Յեկ նախնյաց վողին մոռցված դամբանից

Մեր խեղճ աշխարհում, վորպես մի փյունիկ,

Կ'զարթնե փառքով ավերակներից,

Գարնան պես մատաղ ու միշտ գեղեցիկ:

Հայ մեղջանը հաղնում է պատմական հագուստ, յերկրպագելով վոչ միայն իր քրիստոնյա, այլ և նույնիսկ հեթանոս նախորդներին: Բայց նրա հեթանոսությունը կամ «հեթանոս յերգերը» շատ չափավոր են, վորովհետև առհասարակ նա «չափավորության ասպետ» է կուցության և մտածության բոլոր բնագավառներում անխտիր: Նա կուգեր իր սիրուհու համար Անահիտի պաշտամունք առեղծել, նրա համանր գոհվելը մեծ յերջանկություն համարել, ծխել նրա առաջ հարվե

ու գմուռն իբր մի դիցուհու հանդեսը: Բայց դրա հետ միասին կամ ա-
մենի շուտ դրանից ծագող «մեղքը քայելու» համար նա մի այլ սեղան
և կանգնեցնում և նրա վրա դնում է «Ս. Գիրքը», վորի ընթերցանու-
թյունը նա ջերմորեն պաշտպանում է իբրեւ մարդկանց մեջ սեր տա-
րածելու միջոց: Յեւ դա հասկանալի չէ: Գողթենին չկարողանալով
լուծել կյանքի «գորդյան հանգույցները», դիմում է կրոնական ար-
ժեքների ամտորիտետին և աշխատում է դրանց միջոցով հնազանդու-
թյան մեջ պահել «փոքր յեղբորը», «ճակատագրի խորթ փորձ-
որ», ինչպես անվանում է Հովհաննիսյանը աշխատամիտներին: Մեչա-
նական գթասրտություն այդ «խորթ փորձող» նկատմամբ քրիստոնեա-
կան մորալի հրամայականով—ահա՛ մեր բանաստեղծի սոցիալական
ծրագրի քիչնո—եսենցիան, վոր նա ժառանգել է իր ուսուցիչ Ս. Շու-
հադիցից: XIX դարավերջի հասարակական կարիքներ գոհացնելու
համար Հովհաննիսյանը դիմում է քիքի անկամ մտրցարեւոյթունների
և աշխտեղից հանում այսպիսի մի «մարդարիտ»։ «Սովորեցեր րա-
բույթուն անել, վորոնեցե՛ք իրաւունք, ուղղութիւն ցույց՝ քոնիւտ-
ծին, վորքի դատը տեսեք, վորը և այլու դատը սրաշտպանեցեք»: Սո-
ւի պատվիրան է, վոր կյանքի բոլոր ուր հարցերը քրեցնում է և
անորոշութեան քողի տակ «գրկվածին ուղղութիւն տալը» հանձնում
հրամանատար դասակարգերին—այս դեպքում յեկեղեցուն:

Յեւ դոցա համար յես սեր եմ պահում,
Այդ ճակատագրի խորթ փորձող համար,
Վորոնց առաջին դուռը չի բանում
Միսիթարութեան՝ քարասիրտ աշխարհ:

Ինչո՞վ է սաստում «քարասիրտ աշխարհին» մեր բանաստեղծը:
Քրիստոնեական դժոխքի սարսափներով, «Բեթհեղեմից ծագող նոր
արեւի» ճառագայթներով: «Միտեցեք միմյանց» կոչը անելով, յեղբա-
րական համբույրներ առաջարկելով դաշինք և դառինք—Հովհաննիսյանը
ծառայել է վոչ թե «փոքր», այլ «մեծ» յեղբորը, վոչ թե «խորթ», այլ
«հարալ» փորձիներին: Ուստի և նրա «աղքատութիւն» կամ «տան-
ջանք» սիրելի՛ աշն սովորական ֆրաչներից է, ցանկութեաններից է,
վորոնցով, ինչպես ասում են, սայահաստակված են դժոխքի հատակնե-
րը: Բոլոր հայերին իր հովանավորութեան տակ առնելով, անոխ, ան-
հիշաչար և սուրբ սեր քարոզելով ամենքին, բանաստեղծը ջուր է ու-
ծել իր դարաչրջանի հրամանատար խափերի քրաղացին: «Ազգի յեր-
դիչ» Գամառ—Բաթիպային ներբողելով՝ նա դարձել է մասամբ նրա
քարոզների ժառանգորդը, տարբերվելով առաջինից միայն մարտա-

կան վեպու թուրքյամբ, վորը պայմանավորված էր հանդամանքների
նոր դասավորութեամբ: Բուրժուազիան հաշտութեան ձեռք է առա-
ջարկում մյուս դասակարգերին, վորովհետեւ մեր կուլտուրական
փրոնտում նա արդեն հաստատել է իր դիկտատուրան: «Երար մեկ-
ները բազուկ միութեան»։ Հովհաննիսյանը այսպես և ձեւակերպում
նրա դասակարգային պատգամը: «Իմենք դեպի՛ դուր միաբան հո-
գով»—ասում է մի այլ տեղ: Միութեան այդ կոչերը մեծ մասամբ
նպատակ ունեին հետաքրքրություն դարձնելու տաճկահայ աղա-
տաղրութեան շուրջը: Բայց դրանից խնդրի ելութիւնը չի փոխվում,
վորովհետեւ հայ բուրժուազիան սահմանի «աստին» և «անդին» միջին-
նույն դասակարգային նպատակներն էր հետապնդում: Նրա գործու-
նեյութեամբ պայմանավորվում էր,—իհարկէ մյուս հրամանատար
խափերի, այս դեպքում հոգեվորականութեան և կալվածատիրութեան
աջակցութեամբ,—«Վողջույն ազգի կենդանութեան յերաշխիքը»:

Մարած է սև կիրք, լուել է նախանձ.
Յեղբայր—ձայնում եմ յես իմ թշնամուն...
Վոհ, թե յերկնային այս դգացումն անանց
Տեր մնար հավետ ամենիս հոգուն:

IV.

Հովհաննիսյանի ստեղծագործութեան հասարակական արժեքը
պարզեմբ մի այլ կողմից: Սկսենք նրա յերգերից և տեսենք սրանք
ինչպես են կապվում հասարակական կյանքի յես ու դեռի հետ:

Վերածնութեան շրջանի յերգիչները մահ չէին յերգում: Մե-
րութեան աղբումները նրանց չէին պաշարում: Հասարակական յե-
տանդի դրսեվորման իմպոտենցիա նրանք չէին զգում: Նրանց դժ-
գոհութիւնը կյանքից՝ ուղղված էր կոնկրետ չարիքների դեմ: Նրանք
ազադան դիտում էին ավելի մեծ խանդավառութեամբ և պակաս
յերկբայութեամբ իրենց սոցիալական ծրագրի հանդեպ:

Այդ բոլոր կետերում դարավերջի և դարասկզբի հայ մեղանու-
թիւնը Հովհաննիսյանի բերանով քարոզել և այնպիսի դադափարներ,
վորոնք նորոշում են դասակարգային վարեջը, իրեալների խամրութիւն,
յեռանդի սմբութիւն:

Նույնիսկ անհասական սիրո բնագավառում մեղանը չի կարողա-
նում մինչեւ վերջը պահել իր համարձակ թափը: Հեթանոսական սի-
րով սկսելով՝ նա վերջացնում է քրիստոնեական արկուայով:

Ծածուկ կիրքը ինձ պիտի տանջե,

Յես չկամիմ քեզ սիրել:

Բայց իմ սիրտը միշտ պիտի խնդրե

Քնքույշ սրտիդ մոտ լինել:

Վոչ միայն այդպես ծածկաբար տանջվում ե կրքից, այլ և, ինչպես ասում ե, գիշերը վեր ե կենում և աղոթք ե անում, յերեվի, վախենում ե, թե ծածուկ կիրքը նրան համարձակ քայլերի կ'ստիպի, յեթե նա «յերկնքի ավտորիտետին» չ'դիմե: Սիրո բնազավառում այդ վախկոտ քաղաքականության ե դիմում այն մեղանը, վոր մի ժամանակ հայտարարել ե. «Մի ժպտիդ համար յես կ'հրաժարվեմ առանց զըջալու բոլոր աշխարհից»:

Մեղանական գործիչը մի ժամանակ համարձակ եր նաև վոչ միայն սիրո, այլ և կյանքի հանդես. իր անձնական յեսի զոհարերության ընդունակ եր նա: Բայց այժմ նա դարձել ե վախկոտ, մահվան ուրվականը միշտ կանգնած ե նրա հանդես: Նա վախենում ե մահվանից և այդ վախը փախցնում ե նրա աչքից քունը:

Յեվ ահա՝ գունատ մառը կ'դրոշմե

Յուր սառն համբույրը մեր սառ շրթունքին,

Յեվ գիտեմ, նա չ'պիտի խաբե

Մեզ փաղաքելով իր անկյանք կրծքին:

Մահվան այդ վախի հետ կապված ե ծերության ապրումը, վոր կոշմարի պես ճնշում ե մեղանի հոգին, թունավորելով նրա կյանքն ու ուրը: Անդադար զգալ կյանքի ծառից տերեւների մեկ մեկ թափվելը և յուրաքանչյուր տերեւի համար վողբ ու լաց բարձրացնել, յերևոր ճանկուել, մազերը պոկել և ունայնություն համարել ամեն ինչ, յեթե կա աստիճանական ծերացում—ահա այն հոգեվիճակը, վոր վարպետորեն ներկայացրել ե մեր բանաստեղծը: Այս բաժնում նա մեծ նախանձ ունի բնության հանդես. նա «հավերժ հառնում ե», իսկ «մարդը մահկանացու յե»: Սերը միայն կարող ե «մոռացունք» տալ «ծերացող սրտին»: Բայց դա յեւ լի յե խաբերալությամբ. անկեղծ սերը հաղփադուտ ե: Այնպես վոր վերջ ի վերջո կյանքը գառնում ե մի անմիտ խաղ, յեթե կա մահը:

Այս անմիտ կյանքի խորհուրդն անմեկին

Ինձ համար դարձյալ գիշեր ե խավար:

Բանաստեղծի անհատական այդ ապրումները, ինչպես ասացինք, ծնունդ են հասարակական այն քեանծության, վոր հաջորդել եր լիթերալիզմի վարեջքին: Հանրային կյանքի թմրությունն ազդել եր նաև

բանաստեղծին, ինչպես այդ գեղեցիկ կերպով ցույց ե տրված «Աշուղ» վոտանավորի մեջ: Հասարակական կյանքի այդ թմրությունից ոգտվում են մութ ուժերը ե պղտոր ջրի մեջ ձուկ վորսում: «Սեմարգական», ինչպես ասում են Սպանիայում հոգեվորականներին՝ գովքն ե անում բանաստեղծը—Նշմիածինը հուշակելով «փարոս աղա-տության»: Հովհաննիսյանի յերգած ճշմարտությունը, արդարությունն ունեն այդ ազատության արժեքը. յեթե Նշմիածինն ազատության սիմվոլ ե, հապա արդարության սիմվոլ կարող եր լինել միապետությունը, յեթե նա «մանիֆեստը» իրագործեր: Ճշմարտության սիմվոլ կղառնար բուրժուական գիտությունը, յեթե Հովհաննիսյանը նրանից պոկեր «յերիտասարդացման» խոստումը: Մեր բանաստեղծը գրել ե կեղծավորի, յեղեռնագործի, մեծատան դեմ. բայց նրա բոլոր ֆիլիսոփականներն ունեն քրիստոնեական քարոզի բնույթ և չեն մատնանշում կոնկրետ չարիք և դարման: Գողթն իր Մանիլովին շաֆար մալքելուն ե սովել. չաքարաքին են բոլոր աննյութ ու անստարակա դայութիւնները...

Հովհաննիսյանը մեղանական կյանքից, անպայման, դժգոհ ե յեղել վորոշ դեպքերում: Նրա հասարակական արժեքն այսօր մեզ համար մի շատ փոքր բան կ'լիներ, յեթե նա չունենար նաև բացասական քննադատություն մեղանական կյանքի թերությունների նկատմամբ: Յեվ, ի պատիվ նրան, պետք ե ասել, վոր նա ծառացել ե յերբեմնապես մեղանական ճահճի դեմ: Բայց իր դասակարգային համայնի թաղերը թույլ չեն տվել մինչև վերջը սկզբունքային վոչնչացման յենթադրկելու քողքենիական հիգրային: Նա այս բաժնում հանդիսացել ե իբրեւ ընթերցող և համաձայնակից, ինչպես աստատարակ իր դասակարգի «բարձր ինտելիգենցիան», վոր ոժտված ե կուլտուրայի բոլոր բարիքներով:

Իր «Պրոմեթեյս» մենախոսության մեջ Հովհաննիսյանը գրում ե հետևյալը.

Բայց դու գիտցի՛ր, կործանելով իմ մարմին՝

Յերբեք իմ գործն ել սպանել չես կարող.

Մարդկանց աչքերն յես բաց արի, տվի լույս

Նոցա խավար, ստրկացած յսեղմ մտքին:

Հիմա տեսներ թե ինչն ե՝ համարում ժխտելի մեղանական աշխարհում:

Տեսնում ես չսարժող կարիք և զրկանք
Յեկ ստրկութեան ճնշող շղթաներ:

Յեղբարեղ, կյանքից չ'տեսած գգվանք,
Վաղ ճաշակել են հոգեմաշ ցավեր:

Այդ կարիքը և զրկանքը վերափորում են մեր բանաստեղծի եսթե-
տիկական ճաշակը. նա կույրեր իր շուրջը բարորություն տեսնել:
Շվեդարական միջավայրի մեղանական բարորութեան «հավատար-
բաշխումը» կամ հավատարմամբ բաշխումը— կարող էր նրան միանգամ-
այն բավականացնել. ահա՛ այս տաղավորութեանն ենք ստանում
Հովհաննիսյանի վո՛չ միայն պոեզիայից, այլ և նրա պրոզայից, նրա
արձակ գրվածքներից:

Վոր հատկապես հետամնաց դավառի համար այդ ապագան նկա-
տի ունենա, շատ հեշտ կերպով կարող ենք ցույց տալ՝ առհասարակ
նրա վերաբերմունքը դեպի հեռավոր ապագան մատնանշելով: Այդ
ապագայի նկատմամբ նրա սպասելիքները լուսավորական Ֆրոնտի
ինդիքներէից շատ հեռուն չեն թեմակոխում: Այս բաժնում նրա մեջ
խոսել է շատ յերկար տարիների մանկավարժը: «Կ'դա ժամանակ—
կանցնի խավարը մոլեռանդութեան», ասում է Հովհաննիսյանը հեռա-
վոր ապագայի մասին: Մտքի լույսի հետ միասին նա գալիք ժամա-
նակներից պահանջում է նաև սրտի լույս կամ «սրտի սրբութիւն».
ասում է՝ պետք է «փրկվել վերածնութեան սրբարար ավազանի» մեջ
մտնելով:

Ի՞նչ ուշիով, ի՞նչ միջոցներով հասնել այդ սրբարար և լուստոտ
ապագային: Քարոզով, տենդենցների մեթոդով:

Անխնա դատի՛ր յեղեռնագործին,
Մեծատան յերեսն այրի՛ր ամթո՛ւմ,
Մէր բոլոր ախտեր ցույց տուր աշխարհին
Խայտառակութեան անարդ պատկով:

Թող վոր չարութեան սարսափի տեսած
Արժանի պտուղն սուր գործերի,
Յեկ կեղծավորը ուժաթափ յեղած
Թող յուր վոսկեղոծ դիմակը հանի:

Այդ բոլորը տեղի ունենալուց հետո, Հովհաննիսյանը հավատաց-
նում է, վոր յերկրի վրա դրախտային վիճակ կ'ստեղծվի և «տառա-
պելոց վոգերեն ու տրտունջ կ'զառնան գոհութեան խաղաղ մաղթանե-
ր»:
Սենտենցների ուղին միշտ հասցնում է խաղաղ մաղթանքների
հանդրմանին:

Քաղքենին յերեկվա մանր բուրժուան է, վոր նեղվում էր ավա-
տականութեան մնացորդներից, բայց այսուր նա հակառակ չէ ալ
մնացորդների հետ դաշինք կուել՝ իր խաղաղ կենցաղը պահպանելու հա-
մար վերահաս վտանգից: Այսուր մասնավոր սեպհականութեան ան-
ձեռնմխելիութեանն է նրա «սրբութեան սրբոցը»:

Քանի չե մարել ոջախի կրակ,
Տունն էլ է կանգուն, տան տերն էլ կենդան.
Ել չկան բոցեր, բայց պալ մոխրի տակ
Կայծերը յերկար դեռ պիտի մնան:

Մասնավոր սեպհականութեան, բարեկեցիկ վիճակ և միջնա-
դարյան խավարի վերացում—ահա՛ սոցիալական այն մաքսիմումը,
վոր կարող էր գոհացնել Հովհաննիսյանին ապագայի նկատմամբ:
Մեղանութեան բացասական կողմերը նա խիստ քննադատել է, ճիշտ է՝
բայց սկզբունքով նա չի ժխտել այն տնտեսական—հասարակական հիմ-
քը, վարից ծագում է քաղքենութեան իբր սոցիալական կաթնգործի:
Նրա ուժեղ տաղանդը հնար է տվել վորոշ բարձրութեան վրա մնալու և
դիտակցաբար քննադատելու մեղանութեանը,—սոսկ անգիտակցաբար
դասակարգային ինտուիցիայով՝ վերջինին տեղ է տվել իր ստեղծագոյ
ճութեան մեջ: Նրան իր բարձր տաղանդը փրկել է գոհականալուց, ան-
ճաշակութեանից, ուստի և նա շատ ավելի կարող է մեղանութեան
քննադատ համարվել, քան սոսկ մեղան: Բայց հայտնի չէ, վոր մա-
նրը բուրժուական իդեոլոգիան ինքն անպայման խոնավեցրե՞լ է իր:

V.

Այժմ անցնենք Հովհ. Հովհաննիսյանի ստեղծագործութեան գրա-
կան արժեքի ընդունման:

Վորեն գրվածքի գրական արժեքը մի վորոշ չափով պայմանավոր-
ված է հասարակական մտքերի այն սիստեմով, վոր բազա չե ծառայում
այդ յերկրի համար: Դրա հետ միասին գրվածքն արժեքավորվում է հա-
սարակական մտքի գրական դրսեվորման չափով: Ուրիշ խոսքով՝ հար-
ցնում ենք—ի՞նչ միտք է տրված և այդ միտքը ինչպես է պատկեր կամ
տրամադրութեան դարձրած: Բայց դրանով դեռ չի սպառվում գրա-
կան արժեքի պրոբլեմը: Վորեն գրվածք այս կամ այն գրականութեան
չգլխայի մի սղակն է. նա ունի նախորդներ՝ կամ մի քայլ առաջ է դը-
նում, կամ մի քայլ հետ վերջիններիս համեմատութեամբ, կամ մու-
տացիա չե անում—մի կատարյալ թուրք, վարի ոյենքներն ու հնարա-
վորութեանը մնում է վորոշել, ստուգել:

Հովհաննիսյանի գրական վաստակը կարելի չե արժեքավորել այդ յերեք առումներով: Պիտի նկատի առնել, վոր նա չատ չուտ և չատ հազճեպ կերպով տաղանդավոր բանաստեղծ է հռչակվել: Նրանից շատ մեծ սպասելիքներ են ունեցել առհասարակ ամենքը, թե ընթերցող, թե քննադատ, թե բեցենդետ: Դա նշանակում է, վոր սերմը ժամանակին է հող նետվել. փուռգլած եր հողը, կար ջուր, կար ջերմ արև, կար գարնանային խոնավություն: Հովհաննիսյանի տաղանդավորության այդ միահամուռ խոստովանությունը չեղաւ և հաստատում է գրականության տեսության մեջ հաճախ հիշատակված մի ճշմարտություն: Այդ այն է, վոր տաղանդը վոչ այլ ինչ է, բայց յեթե փորեւ հանրային խմբակցության սլաքառացած յեսը: Հեղինակի անձնական յեսի մեջ ցայտուն կերպով անդրադառնում է նրա սոցիալական յեսը, հենց այդ պատճառով ել նա համարվում է տաղանդ, այսինքն մեկը շատերի համար: Հենց այդ պատճառով ել հազարները նրան համարում են իրենց հարադատը—համախոս և համագրգաց: Դրանով պիտի բացատրել այն բուռն գովասանքները, փորոնք վիճակվել են մեր բանաստեղծին իր անդրանիկ քննադատների կողմից. իսկ այս վերջիններս իրենց անձնական կարծիքը չեյին տալիս, այլ ձեկակերպում եյին վորոչ ժամանակի հասարակական կարծիքը գրական յերկասիրության նկատմամբ. այդպես է յեղել ամեն մի յուրջ քննադատություն:

Յեթե Հովհաննիսյանի քննադատները գովելով գովել և գովատելով գրվատել են նրա «Ամերակ», «Ամետարան», «Լուսավորչի կանթեղը» և նման վտանաւորները, նշանակում է մեր բանաստեղծի գրական միտքին մի հարց է յեղել ինքնին, վոր ստացել է շատ սղիյն պատասխան: Բայց իղեկողիայի հետ միասին նրա բանաստեղծությունը գրավել է նաև կատարման առավելություններով: Այստեղ նորությունը շատ ակնբախ եր. ամենքն զգում եյին, վոր նոր յերգիչը բերում է նաև նոր ձեւ, հասկանում եյին, վոր նրա յերգերի մեջ կենդանացած է նոր մարդը իր նոր ապրումներով և հույզերով: Ձեկական այդ նվաճումը չեւ կարելի անտես անել:

Յեւ իրոք. հայ լիբերալների ավագ սերնդի բանաստեղծությունն ինքնին ձեւի կողմից վորոչ չափով թոթովանքի յեր նման. գրական վարպետությունը գրեթե բացակայում եր նախկին վոտանավորների մեջ: Մեծ մասամբ տալիս եյին մերկանդամ գաղափարը, առանց դեղաբխտական հագուստ հագցնելու նրան: Ութսունական թվականներին հնար կար նախորդ շրջանի եմոցիոնալ կուտակումը վերամշակման յենթարկելու արվեստի սղորոնքներով՝ թողնելով սեպհական արժեքների գովքը, ճիշն ու աղաղակը կամ սոսի լուսանկարչությունը: Նոր մեջշան իբրև սոսկական մարդ տիրել եր հրապարակին և նա ուզում

էր, վոր իր ներքինը զգեսվորվի գրականության մեջ: Այդպիսի գրականորոգ հանդիսացում Հովհաննիսյանը լիբերալի ստալարիզում:

Նոր դարաշրջանի յերգիչ լինելով՝ Հովհաննիսյանը վո՛չ միայն ձեւի, այլ և բովանդակությանը հարմարեցնում է իր ժամանակի պետքերին: Այն խանդավառ փոփոխությունը, հերոսության այն բուռն թափն ու սաստկությունը, յուրժուական ազդեցության եմոցիոնալ աշխարհի նախնական կուտակման այն պոթիկումները, վորոնցով աչքի յեն ընկել և հրապարակին տիրել Պատկոնյան և Ծախաղիկ—Հովհաննիսյանի մոտ բուցակայում են: Նրա քնարն ստացել է ամէլի հավասարակշիււած բնավորություն: Նա իբրև մարդ ամէլի խոհուն է, անուշադրա, դատող և չափող-ձեկող: Ընդհանրապես մարած է նրա յեսանդը, ինչ վոր դանդաղկուտության վագի յե տիրում նրա ստեղծագործության մթնոլորտի վրա: Այդ սանուկությունը, Հովհաննիսյանի քնարի դատողական բնույթը նրա անդրանիկ քննադատներից մեկը բացատրել է բանաստեղծի հեռավորությամբ իր հայրենիքից: Այս մեկնությունը սխալ է. բանաստեղծի սանուկությունը վոչ թե աշխարհադրական, այլ սոցիոլոգիական յերևույթ է: Սխալ է մի այլ պնդում ևս. իբր թե Հովհաննիսյանը տրամադրությունների փոփոխման չըջաններ և ունեցել. սղորում եզոյիտու-հաճոյամայ և ապա՝ հանրային վշտի յերգիչ: Այդ յերկու կողմերը գիրկընդխառն մենք գտնում ենք նրա բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուի մեջ: Այդ արամադրություններն իրար կից են. հասարակական մեջշան իր յեսի պատուհանից է նայում աշխարհին, վերջինս մեջ դնահատելով առաջին ապահովություն յերաշխիքները: Այստեղ կա հասարակագիտական սղորոգ:

Իբրև յերերուն յեղեղն առվակում,
Տեւում եմ պտուկերս և ուրսափում եմ.
Կսում եմ մարդկանց յերգերը սղորում,
Սնմի'ա ու գտտա՛րկ, և տաղականում եմ:

VI.

Հիմա քննության տուններ Հովհաննիսյանի գրական գրքումները: Հեղինակի ամեն մի գրական պրքում բղխում է նրա հասարակահայեցողությունից, նրա հանրային մտքի կոնցկացկայից: Սոցիալական հիմք ունենալով մեջշանությունը՝ մեր բանաստեղծը գրական ներշնչումներով թոխը պիտի կատարեր այդ փոլորում: Այսինքն վոչ միայն հասարակական հոգեբանության աստղծը պետք է վերցներ մեջշանական սփերայից, այլ և այդ հոգեբանության գեղարվեստական կոնկրետացումը պիտի կատարեր նույն հանրային մեջշանայրի հրամայականներով: Ուրիշ խոսքով՝ Հովհաննիսյանը ցարում



կերպով արտահայտել է վաղ միայն իր դատակարգաշին տիպի խոհերն ու պայքարները, այլ և նրանց յերանգավորումը, կոլորիտն ու ստիլը՝ վաղ միայն «խնշը», այլ և «խնչպեսը»:

Յեթե մեկն իրար հետեից կարդում է Հովհաննիսյանի բանաստեղծությունները և ուզում է ցույցնել այն հոգեբանական անոթները, վարանց մեջ նա կազմակերպել է իր մտածողությունը, ապա նա առաջին և տիրական ձևով, փորձն չարունակ գիմաճ է մեր բանաստեղծը՝ դրամում և յերազր, ցնորքը, անուրջը: Մեղանի յերազայնությունը բրդաբույս է հանրային գործի պակասությունից, իրական կյանքի թմրածությունից և գործնական գծաթուփյուններից քնի միջոցով խուսափելու միտումից: Նա ախորժառնախորժությունը քանում է մեղանի գրեց վերջին կամ գիմելով «անցած սալուրց վաղանցուկ ցնորքին» կամ քաղվք սրերի գրամիջ յերազին: Այդ յերազները նրան պաշարում են, յերբ նա քնած է: Քանի քանի՝ անգամ իր փոստնափորների մեջ գործ է ածում բանաստեղծը քուն և յերազ քանոր: Քանի քանի՝ փոստնափորներ նա սկսում է վերջացնում է. յես քուն յեղա, յես յերազ տեսա, և նման նախադասություններով: Ամեն բով բան կա յերազում:

Բայց. դարձեցա, և վաղ բուրձունք յեղեմի,

Վա՛ղ ջերմություն, վա՛ղ լույս, վա՛ղ յերգ մայրիսյան...

Բանաստեղծը չարունակ յերազում է: Նրա խղճաքն և անփնջ քնի— «սրեր, տարիներ»: Ճակատագրից միայն մի բան է խնդրում, վոր ալի անփնջ քունը— «անփնջ քուն» լինի: Ահա՛ նրա բուն տենչանքը: Համ— յեթը քնից վախենում եր՝ յերազներից խուսափելով, սա յնչպե՛ս ասուկը. քնել և ուզում՝ հենց յերազելու համար:

Յերկրորդ միջոցը, վորով մեղանի կոպում է իրական գծաթուփյունների դեմ. դա սղոթն է: Յերազից հետո յերկրորդ ձևով, վորից շատ աստատություն կա Հովհաննիսյանի ստեղծագործության մեջ: Միտիցիլոմն առհասարակ և ազդեցիկ մասնավորապես վաղ այլ ինչ են, բայց յեթե անյել վիճակից հրաշքով դուրս գալու ցանկություն: Միտիցիլոմն ալիս, ինչպես յերգել է Հովհաննիսյանը՝ դա այն գրությունն է, յերբ մարդ վաղ մի կերպ իր վիճակից դուրս գալու հարկանելով, հուսահատվում է. ձեռքերը ծալում, աչքերը խփում է և իրեն հանձնում «գերագույն ուժին»: Բանաստեղծի բոլոր աղոթքները մեջ հիշատակվում է ալի կրթությունականությունը. աշխարհը մոռանալ, հեռու լինել ազմուկից, «ախանջը ազատ պահել մարդկան չլուկից»:

Յերկրորդ ձևով, վոր տիրապետում է բանաստեղծի գրական պրյումներին մեջ— դա «մոռացոնք-խաբանքն» է, վոր նրա սիրած արտահայտություններից է: Մեղանիական արթնաթի հզոր միջոցներից է խոր-

կոնքը. հասարակական կյանքի վերքերը մերկանդամ բաց տենչ ձեռնարատ չե, հարկավոր է չարել, ծածկել, կամ սալել շուտ՝ գեղեցկացնել նրանց: Իլյուզիա ստեղծելը, յերմենեկանդ գույները, աչք խառնալույս ներքերը սկսած են ածում կյանքի հակասությունները կամ ծածկելու, կամ բխցնելու համար:

Բայց դու մի հիշել իմ դատն վիճակ

Խաբիլ ինձ դարձյալ չքեղ ցնորքով...

Մի այլ յերգի մեջ բանաստեղծը խնդրում է իրեն տալ «մոռացոնք» հոգեգմայլ վիճակը, վորակալի ալի կերպ վախել «բացքը հանգիստ»: Հանգստություն տենչանքը, ինքնանորոտակ հանգիստը— դա մեղանիական յերազած ամենալեզանիկ վիճակն է:

Չարբորդ տիրական ձևով հիշողություններն են: Պարունյանն ասում է, վոր սնանկացած մոճատականներն աղքատ են իրենց հին դավթարները քրքրելով: Այդպես են նաև ծերացած հասարակական խաբիլը. նրանք աղքատ են սղաճական հիշողություններով, անցյալով: Տիկին Սիպիլը նույնիսկ մի փող թերիս յե ստեղծել իր մեղանիական սղաբումներն արդարացելու համար. «անցնելու մոտ իրերն գեղեցիկ կարթն»:

Հասարակական հոգեբանությունն ալի ձևերը դրական պրյումներ են դարձել բանաստեղծի պատկերավորությունը ջնարակ: Հիմնական պատկերը, վոր գերիշխում է Հովհաննիսյանի ստեղծագործության մեջ, — վոթորիկ պատկերն է. վոթորիկ, նախալի տատանումների մեջ, ալի հեռու, քարերի ձևաքին գերի: Այդ հիմնական պատկերը շատ ստորական է այն մեղանիս, վորի համար աղթած է. «տարսու կղզա հարսում»: Ծարսանական տարսերբումներ, անվճարականություն. մյուս ալի գուրս կղզա, թե՛ վա՛ղ:

Իրեն մի նախալի ալյայ յերեսին

Գնում եմ անհույս, վաճառից ընկճված...

Յե՛վ պիտի հաճեն՝ մի որ փառսին,

Կյանքի կատարի հասանքից վերկված:

Հովհաննիսյանի պատկերավորությունն վրա շատ խիտ աղբյուրություն է ալի նրա աշխարհայացքում գերիշխող միտիցիլոմը, հատկապես կրթական դրոշմ կրող պատկերներ շատ է տվել: Նա յեթե շատ «աշխարհիկ» մտքեր նա արտահայտել է կրթական յերանգավորումով: Նրա յերգերի մեջ աստա ձեռքով ցանկված են հետևյալ արտահայտությունները. դրախտի բուրձունք, վաղի հիշատակ, մկրտության Հորդանան, յերկնային յեղեմ, նոր Սիոն, հարսության արհներգ, սղաբում արտաթյուն, ալիսի ցնծություն, և այլն:

Փաստելեալորում յունեից հետո մշտն գրական արշավը, փորի մշտն ինքնաշարժ անդրադարձել և հեղինակի հասարակահայեցողությունը, դառնալով յերգերի յերաժշտականությունն և Ուսեղ յերաժշտականությունն ցույց և տալիս բանաստեղծն իր սխալները յերգերում, հասկապես տիրո ապրումների բնագավառում: Այդ բաժնում հուզական, անոցիտեղ կողմը տիրական լինելով՝ տեղեմում և համադաստատան հարմարում: Բաժանան յերաժշտական են հետևյալ վտանագործները. — «Այ, փորդ աղջիկ, մոտ արի», — «Արի, իմ հոգյակ, իմ գիրկը, արի», — «Դու յերևեցար ինչպես վառ գարնան լուսացող աշի», — «Գանի կե» մասաղ արշունը յետուն յերանիներին մեջ գարկում և ուժգին», — «Ամենա մեծ անգամ, յերբ տեսնում եմ քեզ», — «Յեռ քեզ տիրում եմ», — «Յերգ», — «Կուղեյի լինել կարկաչուն մտակ»:

կրճատել և աստիճան հրատարակութեան նախադասքը : օկդրոմ յեղե և
յերեք քառյակ, հետո զարժել և՛ մեկ : «ՅԼԵՐԳՆ» վրասնապորթ յերկ-
սորդ քառյակից կրճատել և, և ալին :

Զինվորային իր հին հրատարակութեանները, Հովհաննիսյանը բնականօրէն հրատարակութեան առաջ ևր դնում իր ութնամեակեան թիվակա-
ներին գրվածքները լեզվական աճի կուլտուրայով, ինչ վրէ բնականօրէն եր
նրա լեզվատարակութեան ժամանակաշրջանի համար, բայց վաճառան
անսխառնելիք եր քանակութեան դարձի առաջին և լեզվորդ տառնամբայի
համար: Գրադարձի մտադրողներով վիտում և նրա լեզուն: Մի քանի
նմուշ,—ուրբ պիտի մեռնեն,—հանգի (—հանգստանա),—հանգի,—
ծողող,—անքուլթ,—ալուլթ,—պղծութ,— թախտուլ,— գերթ,— պա
լազատել,—դշտ, և այլն:

Հասարակական յեռ ու գեղեցի վայրերումներից հետո պահանջով իրեն, բանաստեղծը ներանձնացել եր ինքն իր մեջ և անհատորոգ դարձել շատ ու շատ նոր ստեղծանքների, հետեւյապես և՛ նոր սրտահալոցական ձևերով: Վորոշ չափով աջը հանդամանքով պիտի բացատրել նրա վերականգնողական և նոր շարժումը, ինչպես լավ գիտենք և մեր նոր լեզուն, և՛ գրաբարը, և՛ բարբառները, և՛ յեմբոպոետի լեզուն, աշխարհն աշխարհը բոլոր սարերը, վորոշացից բաղադրված և մեր գրական լեզուն: Նա միշտով վերջը համառ կերպով պահեց Երանայի գործածած աշխարհ (ստեղծող), քանիստ, մեծամեծ, և այլ սրտահալոցական լեզուները, աջը կերպ սուրբ տալով իր դարձյալական ստեղծողի հիշատակին:

Եւ այն պատճառով պիտի բացատրել նաեւ իշխանական և բերդա-
կան դպարեանութան արդեցութիւնը Հովհաննիսյանի վրձնի վրա. որոն
կարդացողը պետք ևս անպայման ծանոթ լինի Հովհաննիսի «Իշխանեան»,
և «Վարդապետեան», պետք և կարդացած լինի «Աստվածա-
շունչը», պետք և իրարեկ լինի առհասարակ անտիկ գր-
քարեանութան, հռեմական, յատկանական և Վոսկեղարի հե-
ղինականութիւն: Մի քանի նմուշ, — Փյունիկ, — Սիբեի, — Ամանօր,
— Բաղին, — Անուշիւ, — Սիոն, — Հորդանան, — Սարգեանի, — Բեկե-
դեհեմ, — Փրկիչ, — Արեւոյաց հրեշտակ, — Սփնճա, — հրեշտակ
(=դաստիկութիւն), և այլն:

վերնով հիշատակված սրտաճառներով՝ նրա ստեղծագործութեան մեջ նկատելի յի գլուխն պահպանութեան, մոռումբների վերջ միտման նութեան, համաբարակի վերջնութեաններ, շարուն պատկերներ կամ առի- յի շուտ՝ պատկերների կիշներ, վերոնք այլ ևս չեն վարակում, չեն վերջնութեամբ: Ունի շատ վտանգավորներ, վերոնք կատարյալ պարտա- չեն, և չեն հասկանում, թե ինչո՞ւ չեն չարածո գտնու:

21

Եւ չալ շնորհերի հետ համեմատած կատարյալ հեռիորն և Հովհաննիս-
յանի Մարգարանակաճ լեզուն մի չալք տեղեքում: Որքնով. Լեռնալոյի
«Քննար».

Skype zugewandt hat. Inzwischen ist auch

U. per unvollständige, plus un sie & kommen

86U *depression*...

Ուս. Հիշեցնում է Տրեգլարիովսկու հայտնի վրասնամոլորը, վորի մեջ
«Π Ο Ε Χ Α Ι Α» բալլը բաժանված է յեղիս տողերի միջև: Գոթաբեր-
տաշան վրասնամոլորին Հովհաննիսյանը վորը, համար, ինչպես տեսնում
էք, «Կարաստեւել» է...

VIII.

Այս բալլերից հիտոս, մենք կարծում ենք, արդեն պարզ է, զոր Հովհաննեսյանն աչտուր մեկ համար ալիլի պատմական, քան սոցիալական նշանակություն և արժեք ունի: Նրա համար ճիշտ և տեղին էլիներ կրկնել հոյտնի ամբողջմբ. «կուպչատիկն ամենքը գովում են, բայց զրչին են հարգում»: Հովհաննեսյանի հմայքը բուռն թափով լեխեց և մտտ յերգու տառնամյակ, ինն հարյուրական թիվականներն սկզբից և ափսիքի վերջ 1905 թվին հեղափոխությանից հետո արդեն նրա անունը հիշատակվում Ար «Խրբե կլասիկ հեղինակ» քաղաքամարտկան խուտուխումենցում:

Ճիշտ է, 1908 թվին հրատարակած ժողովածուն մի «պատկերասրահի հատար է», նրա մեջ հեղինակը բախված «նոր» բան է ավել․ բայց այդ նորն այլ ևս նորություն չէր բանաստեղծի բնիկերցողներին համար։ Հայ-հաննիսյանը հետ եր մտացել իր ժամանակից։ Ուխտենական, թխական-ներքին նա ավել էր մեջգանական զգացումները նախնական կուտակման պատկերը, բայց այդ կուտակված կապիտալի առաջ զարգացման ուղի-ները հարթվեց վոչ բովանդակության, վոչ էլ ձեռքի կողմից։ Նա ախպես եր դրամ, առես, Սմբատ Զաղադյուի համար է գրում։ Մեռանել, քնա-նայ — ե լե՞րը, 1905 թվականներից հետո...

Պատմական արժեքն, իհարկե, չառ խոչոր է: Եւ իր ժամանակին
տակ եւ թարմ նշուի, թարմ ֆոյում: Անշշանական հասարակացու-
թյան մի քանի պրոբլեմները հմտորեն շոշափել եւ նկատել ե իրեն ծնող
հասարակացի մի քանի թեթու թշուաները, ձիշտ եւ, խոր պնդումներ չի
տրեղ, բայց եւ աշնայեա իր ժամանակի համար կուշտուր-լուաւորական
միտտիւ յի ցուցադրել, «քերթադական ղոճի բարձրության» ե հասել:
Դրա հետ միտտին նա մի անդամից հրապարակ նետից մոտ հիտուն իս-
կաւան քանաւորութլուն, մորքան բան ամենքը միտտին չեյին կար-

դասցել տալ նրա բոլոր նախորդները՝ Արամբարյանից և Թադևադյանից
 ուկաած՝ միևնույն թմառօրեկալի բնագավառում: Նա գրեց լիբրիակաւն
 րանառտեղծ ութ լամբ բոլոր տեսակներով՝ յերդ, ներբող, երգելա, բե-
 գենդ, և այլն:

Նույն խաղ մեզ թափում է, վոր նրա արտ յերգերի մի մասը, վորի մեջ յերգում է պատանեկան հասակի սերը — կարող է, գուցե, դեռ այդ տարիքի համար վողկվողիչ լինել: Իսկ նրա մոտ հարյուր է հիսուն վոտանալորներից տարւ հատը մեր գրականութեան մեջ կմնան իբրեւյ կլասիկական ունիկումներ: Ահա այդ բանաստեղծութունները: Նախ ժողովրդական վողով գրածները. «Ալադրադ բարձր սարին», — «Արազն դո՛վդրական վողով գրածները. «Ալադրադ բարձր սարին», — «Արազն յեկտի լափին տալով» — «Այ վարդ աղջիկ», — «Նոր գարուն», — «Ալադրադ»: Այնուհետեւ՝ «Ժայռ», — «Հատիկ», — «Արտաշապո», — «Հեղուկ կարկաչով» է, վերջապէս. «Կուգե՛լ լինել կարկաչուն վտակ»:

Հովհաննիսյանի բննադատներէց մեկն ասել է: «Իմանալուդոս» ան-
մահացրել է իր անունը»: Իհարկե, վնորո ճշմարտություն կա այդ խոս-
քի մեջ. Հովհաննիսյանը մեր գրականության պատմության մեջ ունի՛-
ր ամուր տեղը: Այդ խոսքը, զժրստարար, չի կարելի և այն իմաս-
տով հասկնալ, թե աշտը ել նա իր գաղափարներով վոգեվորելու,
միտք և գործ արդւոյնաւէրելու ուժ ունի: Այտը ևս ուսուցիչ լինելու
համար նա պետք է կյանքին մի ավելի բարձր դիւարանից նայեր, քան
թե նա արել է: Կյանքում նա չստ թիչ բան է տեսել: Այդ յերեւոյթը
վոմանք բացատրել են նրանով, վոր բանաստեղծը յերկար ժամանակ
սպրել է մի հետամնաց գլուղում: Իհարկե, այդ վրասը նշանակու-
թյուն ունի: Բայց պատճառը մեզ չստ ավելի սոցիոլոգիական է թը-
վում, քան տեղագրական: Գլուղում սպրել և նաև Տոլստոյը, բայց նա
չստ բան է տեսել: Նկատի առեք, վոր Հովհաննիսյանը հոգեվորակա-
նության դեմ մի տող չունի գրած, չնայած գլխեր ալը դասակարգի
«տակն ու գլուխը»:

Հովհաննես Հովհաննիսյանին անվանել են «արեվելահայ գրականությունից մեկը»։ Այս արտահայտությունից դեմ մենք վոչինչ չունենք, միայն մի վերադասություն կուզեյինք անել։ Մեր նոր գրականությունից մեկն է յեղել Հովհաննիսյանը, վոր հենց իր կենդանությունից որերից տկան է արդեն տեղը գիջել ալ սյուների, վորոնց պրաբարձրացել է մեր կույտության վերելքի նոր շենքը։



ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ Հովհաննիսյանի յերկերում գլուղը և գլուղացին գրված են հետին պլանի վրա:

2. Ինչո՞վ բացատրել Հովհաննիսյանի մեծ հռչակը ութսունական թվականներին սկզբում (համեմատել թուամսյանի հռչակի հետ):

3. Հովհաննիսյանի սիրո և վայելքի յերգերը հասարակական մո՞ր խավերի առարկա կարիքներին ելին բավարարում:

4. Ինչո՞վ մեկնաբանել պատմական անցյալի կուլտուր մեր բանաստեղծի ստեղծագործության մեջ:

5. Ուշոր բուրժուազիայի մարտական նացիոնալիզմի քնարչերգու փաստական խնդիրը ինչո՞վ է տարբերվում Հովհաննիսյանի քաղքենիական քնարից:

6. Վերսնեք ենք Հովհաննիսյանի հասարակական իդեալները: (այս հարցին հեռավաղը թող պատասխանի գրախոսը):

7. Ի՞նչ գեղարվեստական արժեք ունի Հովհաննիսյանի ստեղծագործությունը:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Հ. Հովհաննիսյան «Բանաստեղծություններ» (Ա. հրատարակություն, 1887 թ., Բ. հրատ. 1908 թ. և Գ. հրատ. (մոչ ցրվ) 1912 թ.):

2. Ս. Մանդինյան. «Նոր բանաստեղծ», «Աղբյուր», ամսագիր, հատկերված, 1888 թ. № 1, յերես 5—13, № 2, յերես 19—29:

3. Ա. Քարանթար. «Հ. Հովհաննիսյանի բանաստեղծություններ», «Մուրճ», ամսագիր 1889 թ. № 7, յերես 1078—1094:

4. Մ. Բերրերյան. «Ազգային իդեալիստ», «Արարատ», ամսագիր, 1908 թ. № 1, յերես 380—395:

5. Գ. Յենգիբարյան. «Մատենադարանություն», 1909 թ., յերես 58—80:

6. Մ. Արևիկյան. «Հ. Հովհաննիսյան», «Արարատ», ամսագիր, 1912 թ. № 4, յերես 347—363, № 5—6, յերես 515—525:

7. Ա. Մարտունի. «Հ. Հովհաննիսյանի... բանաստեղծությունների հասարակական արժեքը», «Գարուն», ամսանախ, գիրք III, 1912 թ. յերես 207—248:

8. В. Брюсов. „Поэзия Армении“ 1916 г. стр. 17.

9. Сборник Армянской литературы под редакцией Максима Горького, 1916 г. стр. XCIX.

ՀՀ Ազգային գրադարան



NL0382008

65.173